

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ՝ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ**

**1.«Երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման»  
գործունեության լիցենզիա**

- 2017 թվականի ընթացքում «Երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպում» գործունեության տեսակի լիցենզիա չի տրամադրվել:
- 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործում է 1 լիցենզավորված կազմակերպություն:

**2.«Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության»  
լիցենզիա**

- Տրամադրվել է «Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության» 2 լիցենզիա և 2 ներդիր՝ ունիվերսալ հոսքագծի համար:
- 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործում են 29 լիցենզավորված կազմակերպություններ՝ 40 ներդիրներով/հոսքագիծ/:

**3.«Փոստային կապի գործունեության» լիցենզիա**

- Տրամադրվել է «Փոստային կապի գործունեության» 6 լիցենզիա՝ 11 ներդիրներով, որից 6 ներդիր՝ փոստային կապի ծառայությունների և 5 ներդիր սուրհանդակային կապի ծառայություններ մատուցման համար:
- 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործում են 27 լիցենզավորված կազմակերպություններ՝ 47 ներդիրներով:

**4. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-  
տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա**

-Տրամադրվել է անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման 20 լիցենզիա:

-Տրամադրվել է անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման 579 լիցենզիայի ներդիրներ:

-Ուժը կորցրած է ճանաչվել անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման 31 լիցենզիա:

-Ուժը կորցրած է ճանաչվել անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման 531 լիցենզիայի ներդիրներ:

-2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործում են 182 լիցենզավորված կազմակերպություններ՝ 2974 ներդիրներով:

### **5.Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա**

-Տրամադրվել է ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման 1669 լիցենզիա և ներդիրներ:

-Ուժը կորցրած է ճանաչվել ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման 1938 լիցենզիա և ներդիրներ:

-2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործում են 5086 լիցենզավորված ֆիզիկական անձիք՝ նույնքան ներդիրներով:

**Հայաստանի Հանրապետության կողմից արտաքին առևտրի դեպքում սահմանափակումների ենթակա ռադիոէլեկտրոնային և (կամ) քաղաքացիական օգտագործման բարձր հաճախականության սարքերի, այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող սարքերի ներմուծման լիցենզիա**

-Տրամադրվել է Հայաստանի Հանրապետության կողմից արտաքին առևտրի դեպքում սահմանափակումների ենթակա ռադիոէլեկտրոնային և (կամ) քաղաքացիական օգտագործման բարձր հաճախականության սարքերի, այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող սարքերի ներմուծման 878 լիցենզիա:

-Տրամադրվել է Հայաստանի Հանրապետության կողմից արտաքին առևտրի դեպքում սահմանափակումների ենթակա ռադիոէլեկտրոնային և (կամ) քաղաքացիական օգտագործման բարձր հաճախականության սարքերի, այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող սարքերի լիցենզավորման վերաբերյալ 1450 պարզաբանում՝ թղթային և էլեկտրոնային եղանակով:

-ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հետ համատեղ գործարկվել է սույն լիցենզիաները և պարզաբանումները էլեկտրոնային եղանակով տրամադրելու համակարգ:

- Մշակվել և շրջանառության է դրվել «Հայաստանի Հանրապետության կողմից արտաքին առևտրի դեպքում սահմանափակումների ենթակա ռադիոէլեկտրոնային և (կամ) քաղաքացիական օգտագործման բարձր հաճախականության սարքերի, այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող սարքերի ներմուծման լիցենզիայի տրամադրման կարգը, Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք լիցենզավորման ենթակա և առանց լիցենզիայի ներմուծվող ռադիոէլեկտրոնային և (կամ) քաղաքացիական օգտագործման բարձր հաճախականության սարքերի, այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող սարքերի և բարձր հաճախականության սարքավորումների ցանկը հաստատելու և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2015 թվականի մարտի 13-ի թիվ 85-Ն հրամանը ուժը կերցրած ճանաչելու մասին» ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 1425-Ն հրամանը, որը կանոնակարգում է նշված լիցենզիաների բացառապես էլեկտրոնային եղանակով տրամադրելու գործընթացը:

**ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում գովազդային վահանակի տեղադրման համաձայնության տրամադրում**

2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործում է ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում գովազդային վահանակի տեղադրման 1460 թույլտվություն, տեղադրված է թվով 296 գովազդային վահանակ, որից 72-ը գովազդային պաստառով, 75-ը դատարկ, իսկ 149-ը սոցիալական պաստառով:

**ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ  
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ**

**2017 ԹՎԱԿԱՆ**

- 1.«Երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպում»-1 մլն. 300 հազ. դրամ
2. «Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեություն»-39 մլն. 808 հազ. 518 դրամ
3. «Փոստային կապի գործունեություն»-75 մլն. 166 հազ. 500 դրամ.
4. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում-37 մլն. 296 հազ. 556 դրամ.
5. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացում-345 մլն. 634 հազ. 721 դրամ.
6. ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում գովազդային վահանակի տեղադրման համաձայնության տրամադրում.-30 մլն. 009. հազ. 520 դրամ.
7. Հայաստանի Հանրապետության կողմից արտաքին առևտրի դեպքում սահմանափակումների ենթակա ռադիոէլեկտրոնային և (կամ) քաղաքացիական օգտագործման բարձր հաճախականության սարքերի, այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող սարքերի ներմուծման լիցենզիա-878 հազ. դրամ.
8. Ընդհանուր գանձվել է 530 մլն. 093 հազ.815 դրամ.

**«ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻԶՈՑՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

-2017 թվականի ընթացքում լիցենզավորման գործակալության «մեկ պատուհան» ծառայությունում ուսումնասիրվել և մուտքագրվել է ավելի քան 4788 լիցենզիաների և ներդիրների տրամադրման, լիցենզիաները և ներդիրները ուժը ճանաչելու, սեփականատիրոջ փոփոխություններ կատարելու և այլ դիմումներ:

-«Մեկ պատուհան» ծառայությունում առձեռն տրամադրվել են ավելի քան 4000 լիցենզիաներ և լիցենզիայի ներդիրներ:

-«Մեկ պատուհան» ծառայությունում խորհրդատվություն է տրամադրվել ավելի քան 200 իրավաբանական և 1500 ֆիզիկական անձանց:

### **ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐ**

-2017 թվականի ընթացքում Լիցենզավորման գործակալության կողմից անցկացվել է լիցենզավորման հանձնաժողովի 50 նիստեր:

-կազմվել է հանձնաժողովի նիստերի թվով 50 արձանագրություններ:

-կազմվել է հանձնաժողովի նիստերի թվով 328 եզրակացություններ:

-կազմվել է թվով 328 նախարարի հրամանի նախագծեր:

### **ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

-Լիցենզավորման գործակալության կողմից առաքվել է ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման պետական տուրքերի և տույժերի վերաբերյալ 3711 հիշեցումներ:

- Լիցենզավորման գործակալության կողմից պատրաստվել և առաքվել է ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման պետական տուրքի պարտքերի համար դրամական պահանջ ներկայացնելու մասին 97 գրություններ:

- Լիցենզավորման գործակալության կողմից պատրաստվել և գանձման համար ԴԱՀԿ է ուղարկվել 39 գրություն, իսկ վարչական դատարան՝ 3 գրություն:

-Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության լիցենզավորման գործակալություն մուտքագրվել է մոտ 6800 դիմումներ և այլ գրություններ:

Բոլոր դիմումներին և գրություններին տրվել է պատասխան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

**ԸՆԹԱՅՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

-<<ԱՅՓՈՍ>> ՓԲ ընկերության հետ իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ՝ << տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ներկայացվող լիցենզավորման վերաբերյալ դիմումները փոստային բաժանմունքների միջոցով ընդունելու, իսկ տրամադրված լիցենզիաները նույն սկզբունքով հայտատուներին առաքելու համար.

-Նախապատրաստվում են << տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից տրամադրվող լիցենզիաների էլեկտրոնային եղանակով տրամադրելու տեխնիկական առաջադրանքները.

-Շարունակվում են <<Մեկ պատուհան>> սկզբունքով մատուցվող ծառայությունների ընդլայնմանն ուղղված աշխատանքները՝ կապված լիցենզավորման ենթակա գործունեության ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ իրազեկման հետ.

**09.01.2018թ.**